ՀՀ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԿԵՆՏՐՈՆ ԵՎ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ
ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ
ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆ

0018, գրասենյակ՝ ք. Երևան, Տ. Մեծի պող. 23/1, հեռ. (0037410) 54-79-03 www.court.am

Գործ թիվ ԵԿԴ/0119/11/12
ԴԴ17 Ե 24730
«11» սեպտեմբերի 2012թ.

Թիվ ԵԿԴ/0119/11/12 գործով բողոքաբեր
«Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ»
ՀԿ-ի նախագահ Ա. Սաքունցին
/ՀՀ, Լոռու մարզ, ք. Վանաձոր, 2001, Տ. Մեծի 59/

Հարգելի՛ պարոն Սաքունց.

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի 5-րդ մասով սահմանված կարգով՝ ուղարկվում է թիվ ԵԿԴ/0119/11/12 գործով բողոքը քննության առնելու մասին դատարանի 2012 թվականի սեպտեմբերի 11-ի որոշումը:

Կից՝ դատարանի որոշումը «07» թերթից:

ԴԱՏԱՎՈՐԻ ՕԳՆԱԿԱՆ՝ **ԼԵՆԴՐՈՒՇ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

Գործ թիվ ԵԿԴ/0119/11/12

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ԲՈՂՈՔԸ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՌՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«11» սեպտեմբերի 2012թ. ք.Երևան

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը հետևյալ կազմով՝

Նախագահությամբ՝ դատավոր	Գ. Խանդանյանի
Քարտուղարությամբ՝	Ս. Հարությունյանի
Մասնակցությամբ՝	
Բողոքաբերի ներկայացուցիչ՝	Ա. Սաքունցի
ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական կապերի բաժնի պետ՝	Ն. Հարությունյանի
Դատախազ՝	Ե. Ավագյանի

Դռնբաց դատական նիստում, քննության առնելով «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ-ի նախագահ Ա. Սաքունցի բողոքը՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2011 թվականի մայիսի 30-ի որոշումը կատարելուն պարտավորեցնելու պահանջի մասին.

Պ Ա Ր Զ Ե Ց

Բողոքի ընդհանուր նախապատմությունը

«Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ-ի նախագահ Ա. Սաքունցը 30.07.2012թ. բողոք է ներկայացրել դատարան՝ խնդրելով ՀՀ գլխավոր դատախազությանը պարտավորեցնել կատարելու ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2011 թվականի մայիսի 30-ի որոշումը:

Բողոքն 01.08.2012 թվականին ընդունվել է վարույթ և դրա քննարկման համար նշանակվել է դատական նիստ, իսկ որոշման հրապարակման օր է նշանակվել 11.09.2012թ.:

Բողոքաբերի փաստարկները և իրավական դիրքորոշումը

«Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ-ի նախագահ Ա. Սաքունցը, դիմելով դատարան, նշել է, որ 2010թ. սեպտեմբերի 19-ին «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության, «Հայաստանի Հելսինկյան կոմիտե» իրավապաշտպան ՀԿ-ի և «Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» ՀԿ-ի նախագահների կողմից հանցագործության մասին հաղորդում է ներկայացվել ՀՀ գլխավոր դատախազություն (անձին ակնհայտ ապօրինի կալանավորելու և ակնհայտ ապօրինի կալանքի տակ պահելու) մասին:

Ներկայացված հանցագործության մասին հաղորդմանը ՀՀ գլխավոր դատախազության միջազգային իրավական կապերի բաժնի պետի կողմից ստացվել է պատասխան գրություն, համաձայն որի՝ «Ս. Պողոսյանը կալանավորվել է նրան հանձնելու նպատակով, այսինքն՝ կոնվեցիայի 5-րդ հոդվածի ոչ թե «գ» կետի, այլ «զ» կետի հիման վրա, որի դեպքում կոնվենցիան չի նախատեսում անձին անհապաղ դատավորի մոտ տանելու պահանջը»:

2010 թ. դեկտեմբերի 10-ին նույն կազմակերպությունների նախագահները դիմում են ներկայացրել ՀՀ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարան՝ խնդրելով պարտավորեցնել ՀՀ գլխավոր դատախազին դիմումատուների կողմից

ներկայացված հաղորդման հիման վրա հարուցել քրեական հետապնդում ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի և «Նուբարաշեն» ՔԿՀ-ի պետի նկատմամբ:

2011 թ. հունվարի 18-ին ՀՀ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանը ներկայացված դիմումը մերժել է:

2011 թ. մարտի 25-ին նույն կազմակերպությունների նախագահների կողմից ներկայացվել է վերաքննիչ բողոք վերը նշված դատական ակտի դեմ:

2011 թ. մայիսի 30-ին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը ներկայացված վերաքննիչ բողոքը բավարարել է՝ բեկանել է ՀՀ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 2011 թ. հունվարի 18-ի որոշումը և վարույթն իրականացնող մարմնին պարտավորեցրել՝ վերացնելու անձի իրավունքների ու ազատությունների խախտումները: 2011թ. մայիսի 30-ի վերաքննիչ դատարանի կողմից կայացրած որոշումը մտել է օրինական ուժի մեջ:

2012թ. հունիսի 12-ին իր կողմից ներկայացվել է դիմում ՀՀ գլխավոր դատախազին՝ պահանջելով կատարել 2011 թ. մայիսի 30-ի ՀՀ վերաքննիչ դատարանի որոշումը:

2012 թ. հունիսի 25-ին ներկայացված դիմումին ի պատասխան ստացվել է պատասխան գրություն, ըստ որի՝ «գրությունում բարձրացված հարցերի վերաբերյալ Ձեզ մանրամասն պարզաբանումներ են տրվել մեր 05.10.2011թ. թիվ 21/32-570-10 գրությամբ:

ՀՀ գլխավոր դատախազության 05.10.2011թ. թիվ 21/32-570-10 գրության հիմնական պատճառաբանությունը կայանում է նրանում, որ «ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 7-րդ կետի 3-րդ պարբերության համաձայն՝ «Եթե ձերբակալված անձը ձերբակալման պահից 72 ժամվա ընթացքում դատարանի որոշմամբ չի կալանավորվում, ապա նա ենթակա է անհապաղ ազատ արձակման, իսկ Ս. Պողոսյանը քրեակատարողական հիմնարկ է տեղափոխվել ԱՄՆ Վերջինիա նահանգի Արևելյան Ռիչմոնդի շրջանային դատարանի կողմից տրված կալանքի սանկցիայի հիման վրա: ՀՀ Սահմանադրությունը, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը չեն հստակեցնում՝ այս դեպքում անհրաժեշտ է ունենալ Հայաստանի Հանրապետության, թե այլ պետության դատարանի կողմից կայացված որոշում...»:

Գտել է, որ ՀՀ գլխավոր դատախազությանը պետք է պարտավորեցնել կատարել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2011 թ. մայիսի 30-ի օրինական ուժի մեջ մտած որոշումը՝ հետևյալ պատճառաբանությամբ և հիմքերով:

Վկայակոչել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 278-րդ հոդվածի 2-րդ մասը, 290 հոդվածի 5-րդ մասը, 7-րդ հոդվածի 1-ին մասը և նշել է, որ միջազգային պրակտիկան նույնպես միարժեք վկայում է, որ իրավունքի գերակայության, հետևաբար և Սահմանադրության գերակայության, երաշխավորման գլխավոր նախապայմանը համապարտադիր, վերջնական և erga omnes բնույթ ունեցող դատական ակտերի կատարման երաշխավորումն է, ակտեր, որոնք իրավական բովանդակությունից զրկվում են առանց դրանցում արտահայտված իրավական դիրքորոշումները հաշվի առնելու:

Հայտնել է, որ մասնավորապես, ըստ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի շրջանակներում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի առկա նախադեպային իրավունքի ուսումնասիրության, Եվրոպական դատարանը ներպետական դատական ատյանների որոշումների կատարման վերաբերյալ նշում է. «Դատարանի իրավունքը կլինի ոչ իրական, եթե պայմանավորվող պետության ներպետական իրավական համակարգը թույլ տա վերջնական, պարտադիր ուժ ունեցող դատական ակտին մնալ անկիրառելի ի վնաս կողմերից մեկի շահերի», «Ցանկացած դատարանի կողմից կայացված որոշման կատարումը պետք է դիտարկվի որպես դատաքննության անբաժանելի մաս՝ 6-րդ հոդվածի իմաստով»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 278-րդ հոդվածի 2-րդ մասը և 290-րդ հոդվածը՝ դատարանից խնդրել է ՀՀ գլխավոր դատախազությանը պարտավորեցնել կատարելու ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2011 թվականի մայիսի 30-ի որոշումը:

«Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ-ի նախագահ Ա. Սաքունցը դատական նիստի ընթացքում բողոքը պնդել է և խնդրել է այն բավարարել:

ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական կապերի բաժնի պետ՝ Ն. Հարությունյանի փաստարկները և իրավական դիրքորոշումը.

ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական կապերի պետ՝ Ն. Հարությունյանը 25.06.2012թ.-ին թիվ 21/32/570-10 գրությամբ «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ-ի նախագահ Ա. Սաքունցին հայտնել է հետևյալը. «Ի պատասխան ՀՀ գլխավոր դատախազին հասցեագրված Ձեր 12.06.2012թ. թիվ Ե/2012-229 գրության տեղեկացվում է, որ գրությունում բարձրացված հարցերի վերաբերյալ Ձեզ մանրամասն պարզաբանումներ են տրվել մեր 05.10.2011թ. թիվ 21/32-570-10 գրությամբ»:

Ն. Հարությունյանը դատական նիստի ընթացքում հայտնել է, որ ՀՀ գլխավոր դատախազության կողմից ուսումնասիրվել է բողոքը, որի վերաբերյալ կազմվել է պատասխան, որը համառոտ կերպով կներկայացվի իրենց գործընկերոջ կողմից:

Ն. Հարությունյանը խնդրել է Ա. Սաքունցի բողոքը մերժել:

Դատախազ Ե. Ավագյանի բացատրությունը և իրավական դիրքորոշումը

Դատախազ Ե. Ավագյանը դատական նիստի ընթացքում ընթերցել է 28.08.2012թ. թիվ 21/32-570-10 պատասխանը և նույնպես խնդրել է Ա. Սաքունցի բողոքը մերժել:

Բողոքի համար էական նշանակություն ունեցող փաստերը

1. ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական կապերի բաժնի պետ՝ Ն. Հարությունյանի 05.10.2011թ. թիվ 21/32-570-10 գրությամբ inter alia (ի թիվս այլնի) նշվել է, թե ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 30.05.2011թ. որոշմամբ ՀՀ դատախազությանը պարտավորեցվում է վերացնել անձի իրավունքների խախտումները, մինչդեռ այստեղ հստակ չէ, թե որ անձի մասին է խոսքը, եթե խոսքը Սարգիս Պողոսյանի մասին է, ապա վերջինս դեռևս 11.01.2011թ. դիմում է ներկայացրել այն մասին, որ իր իրավունքները որևէ կերպ չեն ոտնահարվել և ոչ մեկին չի լիազորել հանդես գալ իր անունից՝ իր իբր խախտված իրավունքները պաշտպանելու համար, ի դեպ Ս. Պողոսյանի վերոնշյալ դիմումում բարձրացված հարցերն արտացոլված են նաև առաջին ատյանի դատարանի 18.01.2011թ. որոշման մեջ:

2. ՀՀ վճռաբեկ դատարանի որոշմամբ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2011 թվականի փետրվարի 25-ի որոշման դեմ Ա. Իշխանյանի, Ա. Դանիելյանի, Ա. Սաքունցի վճռաբեկ բողոքը վերադարձվել է:

3. 2011 թ. մայիսի 30-ի ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի թիվ ԵԿԴ/0176/11/10 որոշման համաձայն՝ վերաքննիչ բողոքը բավարարվել է. «բեկանել ՀՀ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 2011 թ. հունվարի 18-ի որոշումը և վարույթն իրականացնող մարմնին պարտավորեցնել վերացնելու անձի իրավունքների ու ազատությունների խախտումները:

4. ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական կապերի բաժնի պետ՝ Ն. Հարությունյանի 25.06.2012թ.-ի թիվ 21/32/570-10 գրության համաձայն նշվել է հետևյալը՝ «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ-ի նախագահ Ա. Սաքունցին հայտնել է հետևյալը. «Ի պատասխան ՀՀ գլխավոր դատախազին հասցեագրված Ձեր 12.06.2012թ. թիվ Ե/2012-229 գրության տեղեկացվում է, որ գրությունում բարձրացված հարցերի վերաբերյալ Ձեզ մանրամասն պարզաբանումներ են տրվել մեր 05.10.2011թ. թիվ 21/32-570-10 գրությամբ»:

Դատարանի իրավական վերլուծությունը

Դատարանը, լսելով բողոքաբերի ներկայացուցչին, վարույթն իրականացնող մարմնի բացատրությունները, ուսումնասիրելով բողոքը և դրան կից ներկայացված ապացույցները, յուրաքանչյուր ապացույց գնահատելով գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ, գտավ, որ «Հելսինկյան

Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ-ի նախագահ Ա. Սաքունցի բողոքը՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2011 թվականի մայիսի 30-ի որոշումը կատարելուն պարտավորեցնելու պահանջի մասին, անհիմն է և ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 41 հոդվածի համաձայն դատարանը, ի թիվս քրեական գործերով ընդհանուր այլ լիազորությունների, իրավասու է ,...քննել և լուծել հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների (անգործության) դեմ բողոքները: Այսպիսով, մինչդատական վարույթում օրենսդիրը դատարանին լիազորել է քննելու ոչ միայն քրեական վարույթն իրականացնող իրավասու մարմինների ու պաշտոնատար անձանց որոշումների և գործողությունների օրինականության, այլև՝ անգործության վերաբերյալ բողոքները, իսկ ,...և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից պայմանը բացառապես վերաբերում է հետաքննության մարմինների, քննիչի, դատախազի և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների որոշումներին ու գործողություններին:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի համաձայն՝ հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների՝ սույն օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր չլինելու դեմ բողոքները դատարան կարող են ներկայացվել կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, տուժողի, քրեական դատավարության մասնակիցների, այլ անձանց կողմից, որոնց իրավունքները և օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով և գործողություններով, և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից: Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ բողոքը ճանաչելով հիմնավորված՝ դատավորը որոշում է կայացնում անձի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականության մասին: Գտնելով, որ բողոքարկված գործողությունները կատարված են օրենքին համապատասխան, և անձի իրավունքները կամ ազատությունները խախտված չեն, դատարանը որոշում է կայացնում բողոքը մերժելու մասին(...):

«ՀՀ Սահմանադրական դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 7-ի ՍԴՈ-844 որոշմամբ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասի «...և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից» դրույթը, դատական պրակտիկայում դրան տրված՝ նաև «անգործության» վերաբերվող բովանդակության մասով, որով գործնականում նույն հոդվածի 2-րդ մասի վրա տարածելով 1-ին մասում նախատեսված պայմանն ու նման մեկնաբանությամբ դիմողների նկատմամբ կիրառելով հոդվածի 1-ին մասը՝ սահմանափակվել են մարդու՝ դատարանի մատչելիության և արդար դատաքննության սահմանադրական իրավունքները, ճանաչվել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասին հակասող և անվավեր:

Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում դատական բողոքարկման առարկա անմիջականորեն կարող են հանդիսանալ քրեական հետապնդման մարմինների կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր չլինելու դեմ բողոքները, եթե դրանք չեն բավարարվել դատախազի կողմից՝ անկախ նրանից, թե բողոքարկման արդյունքում դատախազի կողմից ՀՀ քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված ակտեր են կայացվել, թե դրսևորվել է անգործություն»: */Տե՛ս՝ Ա.Մողրովյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշում, ԵԿԴ/0076/11/09, 2010թ. փետրվարի 12, կետ 15/:*

ՀՀ Սահմանադրական դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 7-ի ՍԴՈ-844 որոշմամբ արձանագրել է, որ Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներով, մասնավորապես՝ ՍԴՈ-652, ՍԴՈ-665 և ՍԴՈ-690, բազմիցս անդրադառնալով արդարադատության մատչելիության և արդյունավետության խնդիրներին, կարևորելով անձի իրավունքների արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու համար նորմատիվ

իրավական բավարար նախադրյալների ստեղծումն ու զարգացումը՝ միաժամանակ կարևորել է միջազգային պարտավորություններից բխող ներպետական հայեցողական որոշակի ազատությունն արդարադատության մատչելիության և, հատկապես՝ դատական բողոքարկման իրավունքի օրենսդրական սահմանափակումների հարցում: Այդ կարգը, ի թիվս դատարան դիմելու այլ պայմանների (այդ թվում՝ ձևական), կարող է իրավաչափորեն ներառել նաև օրենքով սահմանված՝ իրավունքների պաշտպանության արտադատարանական միջոցն սպառելու պայման:

Սահմանադրական դատարանը գտել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վիճարկվող նորմի դատական պրակտիկայի կողմից տրված մեկնաբանության շրջանակներում այդպիսի պարտադիր պայմանի առկայությունը, երբ քրեական վարույթ իրականացնող մարմնի, պաշտոնատար անձի անգործությամբ խախտվել են քրեական դատավարության մասնակիցների կամ շահագրգիռ այլ անձանց իրավունքներն ու օրինական շահերը, և նա չի կարող առանց նախապայմանների իրացնել դատական պաշտպանության իր իրավունքը, չի բխում ՀՀ Սահմանադրության 18 հոդվածի սահմանադրաիրավական բովանդակությունից: Այդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք»: ՀՀ Սահմանադրության և օրենքների հիման վրա այդպիսի համարժեք միջոցների նախատեսումն ու մատչելիության ապահովումը պետության պարտականությունն է:

ՀՀ Սահմանադրության 5, 91 և 103 հոդվածների նորմերին համապատասխան ՀՀ-ում դատական իշխանությունն ու դատախազությունը սահմանադրաիրավական ինստիտուցիոնալ անկախ համակարգեր են՝ բաժանված պետական իշխանության այլ (օրենսդիր, գործադիր) մարմիններից, և գործում են Սահմանադրությամբ ու օրենքներով իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում:

Սահմանադրական դատարանը, հաշվի առնելով նաև ՀՀ օրենսդրական զարգացումների ընդհանուր տրամաբանությունը (մասնավորապես՝ արտահայտված ՀՀ սահմանադրական դատարանի 16 հունվարի 2007թ. ՍԴՈ-673 որոշման մեջ, ինչպես նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 114 հոդվածի 3-րդ մասում), գտել է, որ այն դեպքում, երբ պետական մարմինը (տվյալ դեպքում քրեական վարույթ իրականացնող) կամ պաշտոնատար անձն իրավասու է եղել գործել իր հայեցողությամբ, դատարանը ստուգում է, թե արդյո՞ք տվյալ մարմնի կողմից ակտն ընդունելը կամ այն ընդունելը մերժելը, գործողությունը կատարելը կամ անգործությունն դրսևորելն իրականացվել են օրենսդրությանը համապատասխան:

Այսպիսով, քրեական գործերով մինչդատական վարույթի նկատմամբ դատախազական հսկողության և դատական վերահսկողության հետ կապված իրավահարաբերությունները կարգավորող, այդ թվում՝ սույն գործով վիճարկվող, իրավանորմերի համալիր վերլուծությունը միանշանակ վկայում է այդ գործառույթների ընդհանուր նպատակի (որպես իրավապահ գործունեություն), սակայն տարբեր առանձնահատկությունների մասին, հետևաբար, պատասխանող կողմի փաստարկն այն մասին, թե «...և դատախազական հսկողությունը, և դատական հսկողությունը միմյանց լրացնող ինստիտուտներ են», չի բխում սույն գործով վեճի առարկայից և այդ գործառույթների սահմանադրաիրավական բովանդակությունից: Սահմանադրական դատարանը գտել է, որ քրեական գործերով մինչդատական վարույթի շրջանակներում քրեական վարույթ իրականացնող մարմինների ու պաշտոնատար անձանց որոշումների, գործողությունների ու անգործության դատական բողոքարկման ինստիտուտի կիրառման պրակտիկայում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ այդ բնագավառը կարգավորող նորմերի դրույթները պետք է ընկալվեն նաև որպես համակարգային ամբողջություն, որը պայմանավորված է մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության սահմանադրաիրավական բովանդակությամբ և երաշխիք է ՀՀ Սահմանադրության:

Գործի փաստերով հաստատվում է, որ 2011 թ. մայիսի 30-ի ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի թիվ ԵԿԴ/0176/11/10 որոշման համաձայն՝ վերաքննիչ բողոքը բավարարվել է հետևյալ կերպ.

«բեկանել ՀՀ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 2011 թ. հունվարի 18-ի որոշումը և վարույթն իրականացնող մարմնին պարտավորեցնել վերացնելու անձի իրավունքների ու ազատությունների խախտումները:

ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական կապերի բաժնի պետ՝ Ն. Հարությունյանի 05.10.2011թ. թիվ 21/32-570-10 գրությամբ inter alia (ի թիվս այլնի) նշվել է, *«թե ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 30.05.2011թ. որոշմամբ ՀՀ դատախազությանը պարտավորեցվում է վերացնել անձի իրավունքների խախտումները, մինչդեռ այստեղ հստակ չէ, թե որ անձի մասին է խոսքը, եթե խոսքը Սարգիս Պողոսյանի մասին է, ապա վերջինս դեռևս 11.01.2011թ. դիմում է ներկայացրել այն մասին, որ իր իրավունքները որևէ կերպ չեն ոտնահարվել և ոչ մեկին չի լիազորել հանդես գալ իր անունից՝ իր իբր խախտված իրավունքները պաշտպանելու համար, ի դեպ Ս. Պողոսյանի վերոնշյալ դիմումում բարձրացված հարցերն արտացոլված են նաև առաջին ատյանի դատարանի 18.01.2011թ. որոշման մեջ»:*

ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական կապերի բաժնի պետ՝ Ն. Հարությունյանի 25.06.2012թ.-ի թիվ 21/32/570-10 մեկ այլ գրությամբ նշվել է հետևյալը՝

«Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ-ի նախագահ Ա. Սաքունցին հայտնել է հետևյալը. «Ի պատասխան ՀՀ գլխավոր դատախազին հասցեագրված Ձեր 12.06.2012թ. թիվ Ե/2012-229 գրության տեղեկացվում է, որ գրությունում բարձրացված հարցերի վերաբերյալ Ձեզ մանրամասն պարզաբանումներ են տրվել մեր 05.10.2011թ. թիվ 21/32-570-10 գրությամբ»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի համաձայն՝

(...)

«2. Սույն հոդվածի առաջին մասում նշված անձինք իրավունք ունեն նաև դատարան բողոքարկել հանցագործությունների վերաբերյալ հաղորդումներն ընդունելուց, քրեական գործ հարուցելուց հետաքննության մարմնի, քննիչի և դատախազի հրաժարվելը, ինչպես նաև քրեական գործը կասեցնելու, կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումները՝ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում:

3. Բողոքը կարող է ներկայացվել վարույթն իրականացնող մարմնի գտնվելու վայրի դատարան՝ այն մերժելու մասին տեղեկություն ստանալու կամ, եթե դրա վերաբերյալ պատասխան չի ստացվել, բողոք ներկայացնելուց հետո մեկ ամսվա ժամկետը լրանալու օրվանից՝ մեկ ամսվա ընթացքում»:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները: Իրավական ակտի մեկնաբանությամբ չպետք է փոփոխվի դրա իմաստը:

Դատարանն արձանագրում է, որ բողոքաբերն իր ենթադրյալ իրավունքների և ազատությունների խախտման մասին տեղեկացել է առնվազն 15.10.2011թ., երբ ստացել է ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական կապերի բաժնի պետ՝ Ն. Հարությունյանի 05.10.2011թ. թիվ 21/32-570-10 գրությունն, որտեղ նշվել է, « (...) *թե ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 30.05.2011թ. որոշմամբ ՀՀ դատախազությանը պարտավորեցվում է վերացնել անձի իրավունքների խախտումները, մինչդեռ այստեղ հստակ չէ, թե որ անձի մասին է խոսքը, եթե խոսքը Սարգիս Պողոսյանի մասին է, ապա վերջինս դեռևս 11.01.2011թ. դիմում է ներկայացրել այն մասին, որ իր իրավունքները որևէ կերպ չեն ոտնահարվել և ոչ մեկին չի լիազորել հանդես գալ իր անունից՝ իր իբր խախտված իրավունքները պաշտպանելու համար, ի դեպ Ս. Պողոսյանի վերոնշյալ դիմումում բարձրացված հարցերն արտացոլված են նաև առաջին ատյանի դատարանի 18.01.2011թ. որոշման մեջ»,* և գրությունը ստանալուց հետո մեկամսյա ժամկետում կարող էր դիմել

դատարան, այնինչ վերջինս դիմել է դատարան 30.07.2012թ.՝ գրությունը ստանալուց շուրջ ինը ամիս հետո, որպիսի պարագայում բողոքը չի կարող քննվել ըստ էության՝ այն բողոքարկելու համար օրենսդրի կողմից սահմանված ընդհանուր ժամկետը բաց թողնելու հիմքով, իսկ այդ ժամկետը վերականգնելու՝ քրեադատավարական օրենքով նախատեսված հիմքերը բացակայում են, այսինքն օրենսդրի կողմից բողոքարկման համար սահմանված մեկամսյա ժամկետի էությունը կայանում է նրանում, որ անձն իր ենթադրյալ իրավունքների և ազատությունների խախտման մասին տեղեկանալուց հետո, չի կարող օրինակ՝ բաց թողնելով բողոքարկման համար նախատեսված ընդհանուր առմամբ երկամսյա ժամկետը, որոշումը ստանալուց ութ ամիս հետո, դիմել դատախազին և, ստանալով որոշակի պատասխան, *(այն կարող է լինել բողոքը առանց քննության թողնելու մասին գրությունը և այլն)* դրա հիման վրա դիմել դատարան՝ պատճառաբանելով, որ պահպանել է դատախազին դիմելուց հետո օրենքով սահմանված կարգով դատարան դիմելու մեկամսյա ժամկետը, որն իրավաչափ չէ:

Օրենսդրի կողմից սահմանված մինչդատական վարույթի ընթացքում վարույթն իրականացնող մարմնի գործողությունները կամ անգործությունը բողոքարկելու համար նախատեսված ողջամիտ սեղմ ժամկետներն ինքնին աննպատակ չեն, իսկ դրանց կարգը չպահպանելը հանգեցնում է բողոքն ըստ էության չքննելուն և մերժման մասին որոշում կայացնելուն:

ՀՀ Սահմանադրական դատարանը գտել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վիճարկվող նորմի դատական պրակտիկայի կողմից տրված մեկնաբանության շրջանակներում այդպիսի պարտադիր պայմանի առկայությունը, երբ քրեական վարույթ իրականացնող մարմնի, պաշտոնատար անձի անգործությամբ խախտվել են քրեական դատավարության մասնակիցների կամ շահագրգիռ այլ անձանց իրավունքներն ու օրինական շահերը, և նա չի կարող առանց նախապայմանների իրացնել դատական պաշտպանության իր իրավունքը, չի բխում ՀՀ Սահմանադրության 18 հոդվածի սահմանադրաիրավական բովանդակությունից:

Տվյալ դեպքում, դատարանն արձանագրում է, որ «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ-ի նախագահ Ա. Սաքունցի բողոքը ներկայացված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի 3-րդ մասի պահանջներին համապատասխան, վերջինիս կողմից բաց է թողնվել օրենսդրի կողմից ընդհանուր առմամբ բողոքարկման համար սահմանված ժամկետը, ուստի այն ըստ էության քննելու հիմքերը բացակայում են և պետք է բողոքը մերժել:

Վերոգրյալների հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 41, 44, 290, 379 հոդվածներով՝ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ-ի նախագահ Ա. Սաքունցի բողոքը մերժել՝ անհիմն լինելու հիմքով:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից տաս օր հետո և նույն ժամկետում կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քրեական դատարան:

ԴԱՏԱՎՈՐ Գ. ԽԱՆԴԱՆՅԱՆ